ԻՆՏԵՐՊՈԼ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2014թ.

ՀԱՄԱԽՄԲԵԼ ԲՈԼՈՐ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԱՊԱՀՈՎ ԱՇԽԱՐՀ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ



“Այսօր ավելին քան երբևէ ԻՆՏԵՐՊՈԼԸ պետք է գործի: Աշխարհաքաղաքական հակամարտությունները,սանիտարական ռիսկերը, շրջակա միջավայրում առկա սպառնալիքները, ահաբեկչությունը, անդրազգային կազմակերպված հանցավորությունը, և հատկապես կիբերհանցավորությունը մարտահրավերն են, որոնք ՄԱԿ-ը չի կարող միայնակ հաղթահարել: ”

Յուրգեն Շտոկ

Գլխավոր քարտուղար

ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախքան ԻՆՏԵՐՊՈԼԻ Գլխավոր քարտուղար ընտրվելը Յուրգեն Շտոկը եղել է Գերմանիայի քրեական ոստիկանության ֆեդերալ գրասենյակի փոխնախագահը: Մինչ այդ պաշտոնավարել է ԻՆՏԵՐՊՈԼԻ Գործադիր կոմիտեում՝ որպես Եվրոպայի փոխնախագահ: Ըստ նրա՝ Կազմակերպության ապագայի զարգացման հեռանկարները հետևյալ 4 հիմնական ուղղությունների վրա են հիմնված՝

1.Գործունեության հիմնական ոլորտ- Կենտրոնացնել ուժերը ոստիկանական աշխատանքների վրա, և ուժեղացնել ԻՆՏԵՐՊՈԼԻ դերը որպես բարձր տեխնոլոգիաներով օժտված ոստիկանական բնույթի տեղեկատվության համաշխարհային կենտրոն՝ հետևելով, որպեսզի յուրաքանչյուր անդամ երկրի ոստիկանություն ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և հմտություններ**:**

2.Նորարարություն- ԻՆՏԵՐՊՈԼՆ օգտագործել որպես ոստիկանության ոլորտում մտահաղացումների համաշխարհային լաբորատորիա, ինչպես նաև նոր գործիքներ ստեղծել, որպեսզի հնարավորություն տրվի անդամ երկրներին արդյունավետորեն պայքարել անվտանգության ոլորտում առկա մարտահրավերների դեմ:

3.Գործընկերներ-Մեծացնել գործընկերության շրջանակները այն իրավապահ մարմինների, անվտանգության ոլորտում գործունեություն ծավալող մարմինների և մասնավոր սեկտորի հետ, որոնք նույն նպատակներն են հետապնդում, ինչ ԻՆՏԵՐՊՈԼԸ:

4. **Կառավարում**-Ուժեղ կառավարման համակարգ ստեղծել՝ Կազմակերպության ռեսուրսները հիմնական գործառույթների իրականացման համար արդյունավետ կերպով բաշխելու նպատակով:

1 – ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՆԵՐ

ԻՆՏԵՐՊՈԼԻ ՖԱՅԼԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

- ԻՆՏԵՐՊՈԼԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿՈՄՊԼԵՔՍ
- ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿ
- ԻՆՏԵՐՊՈԼԻ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2 - ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I-24/7

Ոստիկանական անվտանգ հեռահաղորդակցման համաշխարհային I-24/7 համակարգը իրար է կապում ԻՆՏԵՐՊՈԼԻ անդամ երկրների իրավապահ ոլորտի մարմիններին և վերջիններիս հնարավորություն է տալիս օգտվել ԻՆՏԵՐՊՈԼԻ գործիքներից և ծառայություններից: Այն նաև թույլ է տալիս համակարգից օգտվողներին օրվա ցանկացած պահի միմյանց հետ փոխանակել ոստիկանական բնույթի տեղեկություններ և անմիջականորեն մուտք գործել ԻՆՏԵՐՊՈԼԻ տվյալների պահոցներ: Առաջին գծում ծառայություն իրականացնող մարմինները կարող են I-24/7 համակարգ մուտք գործել MIND տեխնիկական լուծման շնորհիվ՝ որևէ շարժական տերմինալից որոնումներ կատարելու համար կամ FIND տեխնիկական լուծման շնորհիվ՝ որևէ ֆիքսված կայանից: 2014թ-ի ընթացքում այս համակարգի միջոցով փոխանակվել են 17 միլիոն հաղորդագրություններ:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՈՑՆԵՐ

2014թ-ի ընթացքում ԻՆՏԵՐՊՈԼԻ անդամ երկրները 1.7 միլիարդից ավելի որոնումներ են իրականացրել Կազմակերպության տվյալների պահոցներով, որը օրական կազմում է միջին հաշվով 4.7 միլիոն որոնում.







ԱՆՁԱՆՑ ՊԱՀՈՑ

Այս պահոցում հաշվառված են հետախուզվող անձանց, հանցագործների և անհայտ կորած անձանց տվյալները: 2011թ-ից հետո այս տվյալների պահոցով կատարված որոնումների թիվը քառապատկվել է՝ հասնելով տարեկան կես միլիարդի:

ՄԱՏՆԱԴՐՈՇՄՆԵՐԻ ՊԱՀՈՑ

Այս պահոցում հաշվառված են ԻՆՏԵՐՊՈԼԻ 179 անդամ երկրների կողմից տրամադրած մատնահետքերը, որոնք թույլ կտան նույնացնել փախուստի մեջ գտնվող հանցագործներին և անհայտ կորած անձանց: 2014թ-ին այս պահոցից օգտվողները կատարել են ժամում միջին հաշվով 48 որոնում:

ԳԵՆԵՏԻԿ ՊՐՈՖԻԼՆԵՐԻ ՊԱՀՈՑ

Այս պահոցը, որն իր ստեղծման պահին՝ 2002թ-ին պարունակում էր ընդամենը 1 ԴՆԹ պրոֆիլ, զգալիորեն ընդլայնվել է: 2014թ-ի ընթացքում յուրաքանչյուր շաբաթ 1 համընկնում է գրանցվել այս պահոցով ստուգումներ իրականացնելիս.







ԿՈՐԱԾ ԵՎ ԳՈՂԱՑՎԱԾ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Այս պահոցը Կազմակերպության ամենահաճախ օգտագործվող պահոցն է եղել 2014թ-ի ընթացքում: Նաև այս պահոցը առաջինն է, որտեղ 1 տարվա ընթացքում գրանցվել են 1 միլիարդից ավելի որոնումներ: Վերջին 5 տարիների ընթացքում դրական համընկնումների թիվը ավելացել է 64 տոկոսով: Այս պահոցում տվյալներ են բեռնում 170 անդամ երկրներ, սակայն դրանից օգտվում են 178 երկրներ: Նշված 178 երկրների կողմից իրականացրած ընդհանուր որոնումների 80 տոկոսը կատարվել է միայն 10 երկրի կողմից: Որոնումների մնացած 20 տոկոսը կատարվել է 168 երկրների կողմից: Խոշոր միջազգային օդանավականներ ունեցող 10 երկրներից միայն 3 են ընդգրկված այս պահոցից ամենահաճախ օգտվող երկրների տասնյակում:

ԳՈՂԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Այս պահոցում հաշվառված է Կազմակերպության անդամ 126 երկրների կողմից գողացված հայտարարված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը: Պահոցում 2014թ-ի ընթացքում կատարվել են 120 միլիոն որոնումներ, որոնց արդյունքում գրանցվել է ժամում միջին հաշվով 30 համընկնում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Բացի համապատասխան ոստիկանական մարմիններից, այս պահոցով ստուգումներ են իրականացրել 80 երկրների մուտքի թույլտվություն ստացած 1600 օգտվողներ՝ մաքսային մարմինների աշխատակիցներ, կառավարական մարմինների և մշակութային կառույցների ներկայացուցիչներ, արվեստի գործերի վաճառքի հարցերով մասնագիտացած անձինք և մշակութային արժեքների մասնավոր հավաքածու ունեցող անձինք:

ՔԱՐՏԵՐ

Ինտերպոլի քարտերը միջազգային ահազանգման գործիքներ են, որոնց նպատակն է Կազմակերպության անդամ բոլոր երկրներին տեղեկացնել հետախուզվող անձանց, վտանգավոր հանցագործների, սպառնալիքների և անհայտ կորած անձանց մասին:

Դիֆուժները մեկ այլ տեսակի ահազանգման համակարգեր են: Դրանք փոխանցվում են անմիջականորեն տվյալ երկրի ԱԿԲ-ի կողմից Կազմակերպության՝ իրենց կողմից ընտրված անդամ երկրներին՝ անձի գտնվելու վայրը հայտնաբերելու կամ ձերբակալելու նպատակով, կամ որպես լրացուցիչ տեղեկատվություն՝ գործի ընթացքը ավարտին հասցնելու համար:



ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՔԱՐՏԵՐ

Հետախուզվող անձինք

Օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձինք

Անհայտ կորած

Ծանր հանցագործություններ կատարած անձինք

Չպարզված դիակներ

Վտանգավոր նյութեր, հանցավոր գործողություններ կամ կասկածելի իրադարձություններ, որոնք սպառնալիք են հանրության անվտանգության համար

Հանցագործների կողմից օգտագործված առարկաներ, սարքավորումներ կամ գործելաոճ

Անվտանգության խորհրդի 1267 Կոմիտեի ցուցակներում հաշվառված անձինք կամ կազմակերպություններ, որոնք կապ ունեն ԱԼ-Քաիդայի և Թալիբան շարժման հետ

2014 թ.-ի ընթացքում

հրատարակվել են

17328

քարտեր

որոնցից

10718

հետախուզվող անձանց վերաբերյալ կարմիր անկյունով քարտեր

1 տարվա ընթացքում

ձերբակալվել են կարմիր անկյունով քարտերով հետախուզվող

2336

անձինք

ՂԵԿԱՎԱՐՄԱՆ և ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Երբ որևէ անդամ երկրի ոստիկանությանը անհրաժեշտ է լինում դիմակայել ճգնաժամային իրավիճակին կամ շտապ տեղեկատվություն ձեռք բերել, կարող է կապ հաստատել ԻՆՏԵՐՊՈԼԻ Ղեկավարման և համակարգման կենտրոնի հետ: Ղեկավարման և համակարգման կենտրոնը շուրջօրյա գործում է Լիոնում և Բուենոս Այրեսում տեղակայված աշխատանքային սրահներում՝ օգտագործելով Կազմակերպության 4 պաշտոնական լեզուները: Երրորդ աշխատանքային սրահը կբացվի Սինգապուրում գտնվող ԻՆՏԵՐՊՈԼԻ համաշխարհային ինովացիոն կոմպլեքսում, որը 2015թ-ին ավելի կընդլայնի Ղեկավարման և համակարգման կենտրոնի կողմից տրամադրվող օպերատիվ բնույթի աջակցության հնարավորությունները: 2014թ-ի ընթացքում Ղեկավարման և համակարգման կենտրոնը աջակցություն է տրամադրել 545 շտապ գործերով, ինչպես նաև հրատարակվել են հնարավոր սպառնալիքների վերաբերյալ 29 միջազգային ահազանգման հաղորդագրություններ: 2014թ-ի ընթացքում 21 մասնագիտացված խմբերի կողմից աջակցություն է տրամադրվել անդամ երկրներին, որոնցից 11-ը՝ խոշոր իրադարձությունների ընթացքում, իսկ 10-ը՝ ճգնաժամային իրավիճակներում գործող արագ արձագանքման թիմերի կողմից:

545
շտապ գործեր

29
միջազգային ահազանգեր

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Քրեական բնույթի տվյալների վերլուծությամբ զբաղվող ԻՆՏԵՐՊՈԼԻ խումբը իրականցնում է հանցավոր գործունեությանն առնչվող նախագծերի, քննությունների և օպերացիների վերաբերյալ օպերատիվ և ռազմավարական բնույթի վերլուծություններ: 2014թ-ի ընթացքում ԻՆՏԵՐՊՈԼԸ ավելի քան 60 վերլուծական տեղեկանքներ է կազմել ահաբեկչության, կազմակերպված հանցավորության և հանցավորության այլ տեսակների վերաբերյալ: Ինտերպոլի վերլուծաբանները նաև խորհուրդներ են տրամադրել, վերապատրաստումներ անցկացրել քրեական վերլուծաբանների համար և կարողությունների ամպրապնդմանն ուղղված գործողություններ իրականացրել:

3 – ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ

ԻՆՏԵՐՊՈԼԻ անդամ 190 երկրները միմյանց հետ կապվում են ԱԿԲ-երի միջոցով, որոնց համաշխարհային մակարդակով իր աջակցությունն է ցուցաբերում ԻՆՏԵՐՊՈԼԻ Գլխավոր քարտուղարությունը՝ Լիոնում (Ֆրանսիա) գտնվող իր նստավայրի, Սինգապուրում գտնվող Ինովացիոն համաշխարհային կոմպլեքսի, տարածաշրջանային 6 բյուրոների (Արգենտինա, Կամերուն, Կոտ դ՛Իվուար, Էլ Սալվադոր, Կենիա և Զիմբաբվե), Թայլանդում տեղակայված կապի բյուրոյի և ՄԱԿ-ում (Նյու-Յորք), ինչպես նաև Եվրամիությունում (Բրյուսել) իր ներկայացուցիչների միջոցով:


Special Representative Office
United Nations
New York, United States of America
Special Representative Office
European Union
Brussels, Belgium
Regional Bureau
San Salvador, El Salvador
General Secretariat
Lyon, France
Liaison Office
Bangkok, Thailand
Regional Bureau
Buenos Aires, Argentina

CONNECTING POLICE FOR A SAFER WORLD